



«ԷՐԵՐՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ



Բովանդակություն

- 3 Անկախ աուդիտորական եզրակացություն
- 6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- 7 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
- 8 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- 9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- 10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «ԷՐԵՐՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ Ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էրեբունի Բժշկական Կենտրոն» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Կազմակերպությունների Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտի (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով գերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:

Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
05 սեպտեմբերի, 2025թ.
Ք. Երևան, Վաղարշյան 12

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար



«ԷՐԵՐՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	14,502,358	10,432,601
Ոչ նյութական ակտիվներ	5	74,255	41,946
Հետաձգված հարկային ակտիվներ	6	201,399	213,142
Տրված կանխավճարներ		289,397	354,522
Ավանդներ	7	569,102	-
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		1,000	1,000
		15,637,511	11,043,211
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	8	1,126,142	829,958
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	2,510,890	1,205,524
Տրամադրված փոխառություններ	10	1,123	1,753
Դրամական միջոցներ	11	1,213,339	1,368,379
		4,851,494	3,405,614
Ընդամենը ակտիվներ		20,489,005	14,448,825
<i>Սեփական կապիտալ և պարտավորություններ</i>			
Կանոնադրական կապիտալ	12	553,853	553,853
Կուտակված շահույթ		11,416,284	9,308,115
		11,970,137	9,861,968
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր, ֆինանսական վարձակալություն և փաստաթղթային ակրեդիտիվի գծով պարտավորություն	15	4,884,480	-
Ակտիվներին վերաբերող շնորհներ	13	40,241	32,435
		4,924,721	32,435
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր, ֆինանսական վարձակալություն և փաստաթղթային ակրեդիտիվի գծով պարտավորություն	15	555,322	2,009,204
Եկամուտներին վերաբերող շնորհ	14	182,094	136,362
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16	2,680,121	2,086,044
Շահութահարկի գծով պարտավորություն		176,610	322,812
		3,594,147	4,554,422
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		20,489,005	14,448,825

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2025թ. սեպտեմբերի 05-ին՝

Գլխավոր տնօրեն

Գլխավոր հաշվապահ

Սարգիս Բաբայան

Աշոտ Բարսեղյան



[Handwritten signature of Sarghis Babayan]

[Handwritten signature of Asot Barselyan]

Ֆինանսական հաշվետվությունները կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ԷՆԵՐԳՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
 ՇԱՀՈՒՑԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
Իրացումից հասույթ	17	21,063,995	19,044,555
Վաճառքի ինքնարժեք	18	(17,471,069)	(15,599,943)
Համախառն շահույթ		3,592,926	3,444,612
Այլ եկամուտ	19	1,625,211	797,946
Վարչական ծախսեր	20	(819,441)	(638,418)
Այլ ծախսեր	21	(1,019,499)	(80,551)
Գործառնական գործունեությունից օգուտ		3,379,197	3,523,589
Ֆինանսական եկամուտ		(244,488)	16,956
Այլ ֆինանսական հոդվածներ	22	162,979	(69,694)
Շահույթ մինչև հարկերը		3,297,688	3,470,851
Շահութահարկի գծով ծախս	23	(615,690)	(691,960)
Տարվա շահույթ		2,681,998	2,778,891
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունքներ		2,681,998	2,778,891

«ԷՆԵՐՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
 ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2024Թ. ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Կուտակված շահույթ	Ընդամենը
2023թ հունվարի 1-ի դրությամբ	553,853	7,585,515	8,139,368
Տարվա շահույթ	-	2,778,891	2,778,891
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	2,778,891	2,778,891
Շահաբաժիններ	-	(1,056,291)	(1,056,291)
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	553,853	9,308,115	9,861,968
Տարվա շահույթ	-	2,681,998	2,681,998
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	-	2,681,998	2,681,998
Շահաբաժիններ	-	(573,829)	(573,829)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	553,853	11,416,284	11,970,137

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

«ԷՐԵՐՈՒՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բժշկական ծառայություններից մուտքեր	21,043,791	19,176,533
Տարածքի վարձակալական վճարներից մուտքեր	23,433	26,823
Ստացված տոկոսներ	7,931	21,400
Այլ մուտքեր	111,742	460,685
	21,186,897	19,685,441
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(6,744,967)	(6,314,123)
Դեղերի, նյութերի ձեռքբերման դիմաց վճարումներ	(5,185,421)	(4,792,316)
Աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով վճարումներ	(2,442,968)	(2,193,860)
Վճարներ շահութահարկ	(910,000)	(710,940)
Վճարումներ այլ հարկերի և պարտադիր վճարների գծով	(2,368,238)	(1,934,114)
Անհատույց տրված ակտիվներ	(6,400)	(33,500)
Այլ ելքեր	(249,396)	(307,230)
	(17,907,390)	(16,286,083)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	3,279,507	3,399,358
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(1,766,951)	(2,717,414)
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքի գծով մուտքեր	-	5,593
Բանկային ավանդների (ներդրում)/մարում,զուտ	(563,000)	-
Փոխառությունների (տրամադրում)/մարում, զուտ	-	1,197
Ներդրումային Գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(2,329,951)	(2,710,624)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		
Վարկի մարում	(458,247)	456,285
Ֆինանսական վարձակալության մարում	(27,636)	-
Վճարված վարկային տոկոսներ	(36,754)	(2,569)
Շահաբաժինների վճարումներ	(521,000)	(1,000,000)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(1,043,637)	(546,284)
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	(94,081)	142,450
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների վրա	(60,959)	(55,423)
Դրամական միջոցներ տարեսկզբի դրությամբ	1,368,379	1,281,352
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ	1,213,339	1,368,379

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Էրեբունի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը (Ընկերություն) հիմնադրվել է 2002թ. մարտին և հանդիսանում է Երևանի քաղաքապետարանի «Էրեբունի բժշկական կենտրոն» առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդը, որի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերը, ՀՀ կառավարության 14.01.2002թ. թիվ 31 որոշման համաձայն, ուղղակի վաճառքի ձևով մասնավորեցվել են աշխատակիցներին:

Ընկերության գործող կանոնադրությունը գրանցվել է 29.03.2002թ. ՀՀ պետական ռեգիստրի Էրեբունի տարածքային բաժնի կողմից (գրանցման համար՝ 278.120.03185, վկայական՝ 03 Ա 053475):

Ընկերությունը իր գործունեությունն իրականացնում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Լայն պրոֆիլի հիվանդանոցային ծառայություններ,
- Բժշկական սպասարկման այլ ծառայություններ:

Ընկերության հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Տիտոգրադյան 14:

Ընկերության աշխատողների միջին թվաքանակը 2024թ. կազմել է 1621 մարդ (2023թ.՝ 1583 մարդ):

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից:

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով: Այլ չափման հիմունքներ կիրառելիս Ընկերությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Ընկերության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Ընկերության գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Ընկերության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար: Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են, ելնելով անընդհատության հիմունքից, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում բնականոն գործունեության ընթացքում և որ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսում գործունեությունը դադարեցնելու կամ էական կրճատելու մտադրություն կամ անհրաժեշտություն չկա:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Ընկերության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:

Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում:

2.6 Նոր և վերանայված ստանդարտներ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) և ՀՀՄՄԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2024թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները առաջին անգամ կիրառվել են 2024թ.-ին:

- Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)
- Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)
- ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)
- Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում (ՀՀՄՍ 8 փոփոխություններ)
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում (ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)
- Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն):

Բացառությամբ ՀՀՄՍ 1 փոփոխությունների և ստորև ներկայացված ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ի՝ «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում» փոփոխությունների, մյուս ստանդարտներ և փոփոխություններ էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՄՍ 1 փոփոխություններ և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2 «Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում»

ՀՀՄՍ 1 փոփոխությունները և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2-ը տրամադրում են ուղեցույց և օրինակներ՝ օգնելու կազմակերպություններին կիրառելու էականության վերաբերյալ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը բացահայտելիս:

Փոփոխությունների նպատակն է օգնել կազմակերպություններին տրամադրել ավելի օգտակար տեղեկատվություն հաշվապահական հաշվառման քաղաքականության մասին՝ փոխարինելով հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության բացահայտման պահանջը հաշվապահական հաշվառման, էական քաղաքականության բացահայտման պահանջով և ավելացնելով

ուղեցույց այն մասին, թե ինչպես պետք է կազմակերպությունները կիրառեն էականության հայեցակարգը:

2.7 Ֆինանսական հաշվետվությունների կազմը

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

- ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ:
 - բ) շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Ընկերությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառնայթի վրա հիմնված դասակարգումը:
 - գ) սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար:
 - դ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով անուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:
 - ե) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից:
- Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Ընկերությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անհրաժեշտ է:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները:

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	3.71	4.50
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Եվրո	413.89	447.90

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչմանը, չափվում է սկզբնական արժեքով, որը ճանաչման ամսաթվի դրությամբ անհապաղ վճարման գնի համարժեքն է: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ:

Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Շենքեր և շինություններ	- 20 տարի,
Մեքենաներ, սարքավորումներ	- 5 տարի,
Տրանսպորտային միջոցներ	- 5-15 տարի,
Արտադրական գույք, տնտեսական գույք,	- 1-10 տարի,
Այլ հիմնական միջոցներ	- 8 տարի:

3.3 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվներ են լիցենզիաները, արտոնագրերը և համակարգչային ծրագրերը, որոնք ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

Եթե առկա է որևէ հայտանիշ, որ տեղի են ունեցել ամորտիզացիայի հաշվարկման դրույթաչափերի, ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի նշանակալի փոփոխություններ, ապա ամորտիզացիան վերանայվում է առաջընթաց կերպով՝ նոր ակնկալիքներն արտացոլելու նպատակով:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Լիցենզիաներ, արտոնագրեր	- 1-10 տարի,
Համակարգչային ծրագրեր	- 1-10 տարի,
Այլ	10 տարի:

3.4 Արժեզրկում

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է

չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

Ընկերությունը, որպես վարձակալ, մեկնարկի ամսաթվի դրությամբ ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ փոքրարժեք ակտիվների և վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորությունների, համաձայն ՖՀՄՍ 16-ի:

Սկզբնական ճանաչում

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունը չափում է օգտագործման իրավունքով ակտիվը սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության պարտավորության գծով սկզբնական չափման գումարը,
- վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,
- վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, և
- այն ծախսումների գնահատականը, որը վարձակալը կկրի հիմքում ընկած ակտիվը ապամոնտաժելիս կամ քանդելիս, ինչպես նաև այդ ակտիվի զբաղեցրած տեղանքը վերականգնելիս կամ հիմքում ընկած ակտիվը վերականգնելիս բերելով այն վիճակի, որը պահանջվում է վարձակալության պայմանագրի ժամկետներով և պայմաններով:

Վարձակալության մեկնարկի ամսաթվին Ընկերությունը պետք է չափի վարձակալության գծով պարտավորությունը՝ այն վարձավճարների ներկա արժեքով, որոնք դեռևս չեն վճարվում այդ ամսաթվին: Վարձավճարները պետք է գեղջվեն՝ կիրառելով Ընկերության վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել: Եթե այդ դրույքը հնարավոր չէ հեշտությամբ որոշել, Ընկերությունը պետք է կիրառի վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը:

Հետագա չափում

Սկզբնական արժեքի մոդել կիրառելիս Ընկերությունը պետք է չափի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը սկզբնական արժեքով՝

- հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները և
- ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ:

Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալը վարձակալության գծով պարտավորությունը պետք է չափի՝

- ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար,
- նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար, և

- վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ ցանկացած վերանայում կամ վարձակալության վերափոխում, կամ վերանայված հաստատուն վարձավճարները արտացոլելու համար:

3.5 Պաշարներ

Սկզբնական ճանաչման պահին պաշարները չափվում են սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Ձեռքբերման ծախսումներն են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը և հարկերը (բացառությամբ նրանց, որոնք հարկային մարմինների կողմից ենթակա են կազմակերպությանը ետ վերադարձման), ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ հոդվածներ հանվում են:

Վերամշակման ծախսումները ներառում են արտադրանքի վերամշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները, պատրաստի արտադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են վերամշակելու ընթացքում:

Այլ ծախսումները ինքնարժեքում ներառվում են այն չափով, ինչքանով դրանք կատարվել են պաշարները ներկա գտնվելու վայր և պատշաճ վիճակի բերելու համար:

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ նախագծերի համար նախատեսված ու արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի ինքնարժեքը հաշվարկվում է կոնկրետ արտադրանքի ինքնարժեքի որոշման ճանապարհով:

Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը Մուտք՝ Առաջինը Ելք» (ԱՄԱԵ) մեթոդով:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում գերնորմատիվային ծախսումները, պահպանման ծախսումները, վարչական վերադիր ծախսումները և վաճառքի ծախսումները:

Պաշարները հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման գուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքի ցանկացած իջեցման գումար մինչև իրացման գուտ արժեք և պաշարների բոլոր կորուստները ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ դրանք տեղի են ունեցել:

Ոչ իրացվելի պաշարները դուրս են գրվում իրենց հաշվեկշռային արժեքով:

3.6 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ:

Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սխտեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.7 Մեփական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող կապիտալի գործիքները հաշվառվում են անվանական արժեքով: Շահաբաժինները ճանաչվում են որպես պարտավորություն այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվում են:

3.8 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Ընկերությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընկերությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Ընկերությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝

-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները գուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.9 Հասույթ

Ընկերությունը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Ընկերության կողմից տրամադրվող ցանկացած առևտրական գեղջերի, ժամկետից շուտ վճարման գեղջերի և քանակային զիջումների գումարները:

Ընկերության հասույթը առաջանում է բժշկական ծառայությունների մատուցումից, որոնց համար եկամուտը ճանաչվում է դրանց մատուցման ժամանակաշրջանում:

Ընկերության հասույթը ստացվում է ֆիքսված գնի պայմանագրերից, և հետևաբար, յուրաքանչյուր պայմանագրից ստացվող եկամտի չափը որոշվում է ելնելով այդ ֆիքսված գներից:

Ընկերությունը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը պետք է ճանաչի, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.

բ) Ընկերությունը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն.

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ընկերության հասույթը առաջանում է բժշկական ծառայությունների մատուցումից:

3.10 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Ընկերության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.

ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.

գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.

դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝

- ընկերության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ

- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.11 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են «Ֆինանսական ծախս», «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել են Ընկերության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Ընկերությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլինեք, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլինեք:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառում են վարկերը և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4 Հիմնական միջոցներ

հազար դրամ	Հոդամասեր	Շենքեր	Մեքենա սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Կառուցման ընթացքում գտնվող ՀՄ-եր	Արտադրատնտեսական գույք և այլն	Ընդամենը
Սկզբնական արժեք							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	1,315,394	3,137,156	9,399,769	79,603	415,711	1,832,820	16,180,453
Ավելացում, կապիտալացում	105,800	1,304,821	1,048,312	-	1,950,622	531,431	4,940,986
Օտարում	-	-	(20,085)	-	(927,092)	(25,217)	(972,394)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,421,194	4,441,977	10,427,996	79,603	1,439,241	2,339,034	20,149,045
Ավելացում, կապիտալացում	-	2,949,144	5,636,354	-	1,565,924	464,146	10,615,568
Օտարում, դուրսգրում	-	-	(1,657,350)	(4,824)	(3,005,165)	(27,714)	(4,695,053)
Վերադասակարգում	-	-	27,044	-	-	(27,044)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,421,194	7,391,121	14,434,044	74,779	-	2,748,422	26,069,560
Կուտակված մաշվածություն							
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	-	1,297,187	5,426,550	77,429	-	945,841	7,747,007
Տարվա ծախս	-	290,902	1,510,846	433	-	207,817	2,009,998
Օտարում	-	-	(16,812)	-	-	(23,749)	(40,561)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	1,588,089	6,920,584	77,862	-	1,129,909	9,716,444
Տարվա ծախս	-	470,669	1,893,882	433	-	261,112	2,626,096
Օտարում	-	-	(743,265)	(4,824)	-	(27,249)	(775,338)
Վերադասակարգում	-	-	2,796	-	-	(2,796)	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	2,058,758	8,073,997	73,471	-	1,360,976	11,567,202
Հաշվեկշռային արժեք							
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,421,194	2,853,888	3,507,412	1,741	1,439,241	1,209,125	10,432,601
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	1,421,194	5,332,363	6,360,047	1,308	-	1,387,446	14,502,358

Մաշվածության գծով ծախսը 2024թ. կազմել է 2,626,096 հազ. դրամ, որից 46,740 հազ. դրամը բաշխվել է վարչական ծախսերին, իսկ 2,579,356 հազ. դրամը բաշխվել է ինքնարժեքին:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 4,297,472 հազ. դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են գրոյական հաշվեկշռային արժեքով:

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը հիմնական միջոցների ձեռքբերման գծով ունի 289,398 հազ. դրամ պայմանագրային պարտականություններ:

5 Ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Լիցենզիաներ և վստահագրեր (ֆրանշիզներ)	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	21,991	20,755	42,746
Ավելացում, կապիտալացում	14,680	10,934	25,614
Օտարում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	36,671	31,689	68,360
Ավելացում, կապիտալացում	21,529	21,547	43,076
Օտարում, դուրսգրում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	58,200	53,236	111,436
Կուտակված մաշվածություն			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	14,187	7,131	21,318
Տարվա ծախս	4,499	597	5,096
Օտարում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	18,686	7,728	26,414
Տարվա ծախս	4,803	5,964	10,767
Օտարում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	23,489	13,692	37,181
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	17,985	23,961	41,946
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	34,711	39,544	74,255

6 Հետաձգված հարկային ակտիվներ
Հետաձգված հարկերի շարժը հետևյալն է՝

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	213,142	216,204
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	(11,744)	(3,062)

Տարեկերջի մնացորդ	201,399	213,142
-------------------	---------	---------

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2024թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Աշխատակիցներին փոխհատուցումների գծով	225,058	15,367	240,425
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստ	30,972	4,031	35,003
Պաշարների արժեզրկում	8,111	(329)	7,782
Հիմնական միջոցներ	-	-	-
	264,141	19,069	283,210
<i>Հետաձգված հարկային պարտավորություն</i>			
Հիմնական միջոցներ	50,999	30,812	81,811
Զուտ արդյունք	213,142	(11,743)	201,399

2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար հետաձգված հարկերը խմբավորում են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. հունվարի 1	Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	2023թ. դեկտեմբերի 31
<i>Հետաձգված հարկային ակտիվներ</i>			
Աշխատակիցներին փոխհատուցումների գծով	214,556	10,502	225,058
Կասկածելի դեբիտորական պարտքերի պահուստ	30,972	-	30,972
Պաշարների արժեզրկում	8,111	-	8,111
Հիմնական միջոցներ	-	-	-
	253,639	10,502	264,141
<i>Հետաձգված հարկային պարտավորություն</i>			
Հիմնական միջոցներ	37,435	13,564	50,999

Զուտ արդյունք	216,204	(3,062)	213,142
---------------	---------	---------	---------

7 Ավանդներ

Ընկերությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ ռեզիդենտ բանկում ունի 569,102 հազ.դրամի ավանդ:

Ավանդային պայմանագրի համարը	Ավանդային հաշվի համարը	Ավանդի արժույթը	Տոկոս	Ավանդի մնացորդը /Հազ. դրամ/	Ավանդի մարման ամսաթիվը
AC3054749970	2481300899930033	AMD	8	151,877	25/01/27
AC3054749974	2481300899930015	AMD	8	91,123	25/01/27
AC3054749971	2481300899930015	AMD	8	60,751	25/01/27
AC3054749972	2481300899930006	AMD	8	94,164	25/01/27
AC3054749973	2481300899930051	AMD	8	91,126	25/01/27
AC3054749837	2481300899930042	AMD	8	80,061	18/02/26

8 Պաշարներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեղորայք և բժշկական պարագաներ	992,765	733,359
Շինանյութեր	7,135	24,805
Պահեստամասեր	35,142	16,110
Անավարտ արտադրություն	12,640	14,982
Այլ	78,460	40,702
	1,126,142	829,958

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<i>Բուժ. ծառայությունների գծով դեբիտորական պարտքեր</i>		
Դեբիտորական պարտքեր բժշկական ծառայությունների գծով պետպատվեր	442,535	378,146
Ապահովագրական ծածկույթի գծով	298,453	235,571
Ապահովագրական ծածկույթի անհավաքագրելիության պահուստ	(97,851)	(75,456)
Սոցիալական փաթեթի գծով	43,335	29,708
Կապակցված կողմերից	7	7,283
Այլ	49,377	73,040
	735,856	648,292
Այլ պարտքեր կապակցված կողմերից	1,060,890	66,890

Կապակցված կողմերից անհավաքագրելիության պահուստ	(65,523)	(65,523)
Այլ դեբիտորական պարտքեր	77,910	82,362
Այլ դեբիտորական պարտքերի անհավաքագրելիության պահուստ		-
	1,809,133	732,021
Տրված կանխավճարներ	348,228	448,919
Տրված կանխավճարների պահուստ	(31,088)	(31,089)
Հարկերի միասնական հաշիվ	381,964	54,056
Այլ	2,653	1,617
	2,510,890	1,205,524

10 Տրամադրած փոխառություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տրամադրված փոխառություններ	489,098	489,728
Պարտքային կորուստների գծով պահուստ	(487,975)	(487,975)
	1,123	1,753

11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	5	5
Դրամական միջոցներ բանկերում դրամային	877,506	464,307
Դրամական միջոցներ բանկերում արտարժույթային	323,625	893,113
Դրամական միջոցներ ճանապարհին	12,203	10,954
	1,213,339	1,368,379

12 Մեփական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 553,853 հազ.դրամ, տեղաբաշխված է 553,853 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս՝ յուրաքանչյուրը 1,000 դրամ անվանական արժեքով, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության միակ բաժնետեր, ՀՀ քաղաքացի Հարություն Քուշկյանին:

Ընկերությունը 2023թ. հայտարարել է 1,056,291 հազ. դրամ շահաբաժին:

Ընկերությունը 2024թ. հայտարարել է 573,829 հազ.դրամ շահաբաժին:

13 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեկգրի մնացորդ	32,435	29,645
Ընթացիկ շնորհներից վերագրված	11,966	4,732
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված	(4,160)	(1,942)
Տարեվերջի մնացորդ	40,241	32,435

14 Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեկգրի մնացորդ	136,362	113,402
Ստացված շնորհներ	627,858	457,413
Փոխանցում ակտիվներին վերաբերվող շնորհներին	(11,966)	(4,732)
Շնորհից եկամուտ	(570,160)	(429,721)
Տարեվերջի մնացորդ	182,094	136,362

15 Վարկեր, ֆինանսական վարձակալություն և փաստաթղթային ակրեդիտիվի գծով պարտավորություն

Հազար դրամ	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ
Վարկեր				
Վարկեր	515,317	2,009,204	4,710,675	-
Լիզինգ	40,005	-	173,805	-
Չկրած տոկոսային ծախսեր	-	-	-	-
	555,322	2,009,204	4,884,480	-

Պայման. տեսակ	Պայման. համար	Պայմ. կնքման ամսաթիվ	Պայմանագրի ավարտման ամսաթիվ	Պայմ. գումար	Արժ.	Տոկոս	Մնացորդ առ 31.12.2024թ.
Վարկային գիծ	LC24/00064	01.03.2024թ.	01.07.2025թ.	1,000,000	USD	8	374,000
Վարկ	EM23/00288	22.03.2023թ.	22.03.2024թ.	550,000	USD	8	-
Վարկային գիծ	LC22/00029	24.02.2022թ.	05.06.2024թ.	1,000,000	USD	8	-

Պայման. տեսակ	Պայման. համար	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Պայմանագրի ավարտման ամսաթիվ	Արժ.	Տոկոս	Մնացորդ առ 31.12.2024թ.
Լիզինգ	2405 546	17.06.2024թ.	17.01.2028թ.	EUR	9	516,657.61

16 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի	2023թ. դեկտեմբերի
------------	-------------------	-------------------

	31-ի դրությամբ	31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր գնումների գծով	490,759	282,423
Ստացված կանխավճարներ	23,200	25,242
Կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով	271,127	-
Աշխատավարձի գծով պարտք	495,438	454,500
Շահաբաժիններ	25,100	-
Արձակուրդի պահուստ	1,335,694	1,250,327
Այլ կրեդիտորական պարտքեր	38,803	73,552
	2,680,121	2,086,044

Արձակուրդի պահուստը իրենից ներկայացնում է Ընկերության աշխատողների կուտակված փոխհատուցելի բացակայությունների գծով մնացորդը, որը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,335,694 հազ. դրամ, իսկ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,250,327 հազ. դրամ:

17 Հասույթ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար դրամ		
Վճարովի բժշկական ծառայությունների գծով	11,570,236	10,660,141
Ապահովագրության միջոցով փոխհատուցվող ծառայություններ	337,036	434,521
Պետական պատվերի ծառայություններ	8,277,598	7,350,472
Սոցիալական փաթեթների շրջանակներում ծառայություններ	879,125	599,421
	21,063,995	19,044,555

Բժշկական ծառայությունների գծով հասույթը ամբողջությամբ մատուցվում է ՀՀ, Երևան քաղաքում գտնվող բժշկական կենտրոնում:

18 Վաճառքի ինքնարժեք

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հազար դրամ		
Հատուցումներ աշխատակիցներին	8,580,812	8,036,498
Դեղորայք, բժշկական և տնտեսական պարագաներ	4,807,568	4,224,854
Հիմնական միջոցների մաշվածության, սպասարկման և նորոգման ծախսեր, ամորտիզացիայի ծախսեր	2,647,747	2,016,261
Լաբորատոր հետազոտություններ և այլ բժշկական ծառայություններ	136,627	92,848
Կոմունալ ծախսեր	437,873	420,723
Տնտեսական, վառելիքի ծախսեր	251,704	201,248
Փոխադրման ծախսեր	65,632	109,819
Վարձակալական ծախսեր	47,460	81,892
Այլ ծախսեր	495,646	415,800
	17,471,069	15,599,943

19 Գործառնական այլ եկամուտներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ապրանքների վաճառքից եկամուտ	-	18,157
Հիմնական միջոցների օտարումից օգուտ	994,500	3,153
Եկամուտներին վերաբերող շնորհից եկամուտ	570,160	429,721
Ակտիվներին վերաբերող շնորհից եկամուտ	4,160	1,942
Վարձակալությունից եկամուտ	30,400	31,256
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտ	9,550	310,871
Դեբիտորական պարտքերի պահուստի հակադարձումից եկամուտ	-	18
Պաշարների արժեզրկման հակաարձումից եկամուտ	1,827	-
Այլ եկամուտներ	14,614	2,828
	1,625,211	797,946

20 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատանքի վարձատրության ծախսեր	455,479	351,132
Հիմնական միջոցների մաշվածության, սպասարկման և նորոգման ծախսեր, ամորտիզացիայի ծախսեր	48,202	33,480
Բանկային և ապահովագրական ծախսեր	95,204	84,484
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	98,354	53,311
Հեռահաղորդակցության ծախսեր	16,868	14,492
Չփոխհատուցվող հարկեր և տուրքեր	21,609	28,898
Այլ ծախսեր	83,725	72,621
	819,441	638,418

21 Այլ ծախսեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հիմնական միջոցների և պաշարների դուրսգրման, օտարման ծախսեր	913,547	16,046
Տույժեր և տուգանքներ	41,263	23,357
Դեբիտորական պարտքերի պահուստի գծով ծախսեր	22,395	-
Ակտիվների անհատույց տրամադրում	9,000	35,600
Այլ ծախսեր	33,294	5,548
	1,019,499	80,551

22 Այլ ֆինանսական հոդվածներ, զուտ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
------------	---	---

Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը

Դրամական միջոցներ	(60,959)	55,424
Դեբիտորական պարտքեր	(440)	(12)
Ստացված վարկեր և փոխառություններ	224,204	(120,170)
Կրեդիտորական պարտքեր	174	(4,936)
	162,979	(69,694)

23 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	603,946	688,897
Հետաձգված հարկ	11,744	3,063
	615,690	691,960

Հաշվետու տարվա համար ՀՀ շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18 % (2023թ.՝ 18 %)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	3,297,688		3,470,851	-
Շահութահարկ 18% (2023թ. 18 տոկոս)	593,584	18.00	624,753	18.00
Չնվազեցվող ծախսեր	22,106	0.67	67,207	1.94
Շահութահարկի գծով ծախս	615,690	18.67	691,960	19.94

24 Ֆինանսական գործիքներ

24.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.11-ում:

24.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,809,133	732,021
Փոխառություններ	1,123	1,753
Ավանդներ	569,102	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,213,339	1,368,379
	3,592,697	2,102,153

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր, ֆինանսական վարձակալություն և փաստաթղթային ակրեդիտիվի գծով պարտավորություն	5,439,802	2,009,204
Առևտրային կրեդիտորական պարտքեր	490,759	282,423
	5,930,561	2,291,627

25 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունը իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժույթային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

25.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ընկերության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժույթային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է փոխառություններից, ակրեդիտիվի գծով պարտավորությունից և կրեդիտորական պարտքերից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

Ընկերությունն ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
2024թ.				
Ֆինանսական ակտիվներ				
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,806,532	1,589	1,012	-
Փոխառություններ	1,123	-	-	-
Ավանդներ	569,102	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	889,715	30,799	292,220	605
	3,266,472	32,388	293,232	605
Ֆինանսական պարտավորություններ				

Վարկեր, ֆինանսական վարձակալություն և փաստաթղթային ակրեդիտիվի գծով պարտավորություն	256,667	452,078	4,731,057	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	470,508	2,529	-	17,722
	727,175	454,607	4,731,057	17,722
Զուտ արդյունք	2,539,297	(422,219)	(4,437,825)	(17,117)

Հոդված	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
2023թ.				
<i>Ֆինանսական ակտիվներ</i>				
Առևտրային դեբիտորական պարտքեր	730,335	1,686	-	-
Փոխառություններ	1,753	-	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	475,266	15,019	876,343	1,751
	1,207,354	16,705	876,343	1,751
<i>Ֆինանսական պարտավորություններ</i>				
Ակրեդիտիվի գծով պարտավորություն	-	-	2,009,204	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	275,093	5,335	-	1,995
	275,093	5,335	2,009,204	1,995
Զուտ արդյունք	932,261	11,370	(1,132,861)	(244)

Ընկերությունը ենթարկվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, Ռուբլու դրամի 10% (2023թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի

հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	(42,222)	1,137	(443,783)	(113,286)	(1,712)	(24)

26 Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվներն ու արտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ ղիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,809,133	<u>Ընթացիկ</u> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի	Մակարդակ 3	Կիրառելի չէ

		հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին		
Առևտրային կրեդիտորական պարտքեր	490,759	<u>Ընթացիկ</u> Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր, ֆինանսական վարձակալություն և Փաստաթղթային ակրեդիտիվի գծով պարտավորություն	5,439,802	Վարկերի, ֆինանսական վարձակալության և փաստաթղթային ակրեդիտիվի գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ

27 Կապիտալի կառավարում

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու հնարավորությունն առավելագույնին հասցնելով բաժնետերերի եկամուտները՝ փոխառու և կապիտալ միջոցների օպտիմալ համապատասխանություն ապահովելու միջոցով:

Ընկերության կապիտալը կազմված է սեփական կապիտալից, որը ներառում է թողարկված կապիտալը, կուտակված շահույթը, ինչպես նաև փոխառու միջոցները, որոնք ներառում են վարկերը և ակրեդիտիվի գծով պարտավորությունը՝ բացահայտված ծանոթագրություն 15-ում:

Ընկերության ղեկավարությունը պարբերաբար վերանայում է կապիտալի կառուցվածքը, որպեսզի ապահովի փոխառու միջոցների և սեփական կապիտալի մնացորդների առավելագույն օպտիմալ համապատասխանություն, որը վերլուծվում է՝ ընդհանուր կապիտալը բաժանած ընդհանուր ֆինանսավորման վրա:

Հաշվարկը ներկայացվում է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընդհանուր սեփական կապիտալ	11,968,639	9,861,968
Հանած՝ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	(1,213,339)	(1,368,379)
Կապիտալ	10,755,300	8,493,589
Ընդհանուր սեփական կապիտալ	11,968,639	9,861,968
Վարկեր, ֆինանսական վարձակալություն և Փաստաթղթային ակրեդիտիվի գծով	555,322	2,009,204
Ընդհանուր ֆինանսավորում	12,523,961	11,871,172
Կապիտալի և ընդհանուր ֆինանսավորման հարաբերակցություն	0.86	0.72

28 Պայմանականություններ

28.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

28.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Մա է պատճառը, որ Ընկերությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Ընկերությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

28.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարրնթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

28.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Ընկերությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Ընկերությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենսդրության մեկնաբանություններն ապագայում են կարող են էական պարտավորություններ առաջացնել:

28.5 Դատական հայցեր

2024թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական հայցերն են.

Թիվ ԵՂ2/0741/02/24 քաղաքացիական գործն ըստ Մելանյա Ուրմիանոսի Ջանոյանի հայցադիմումն ընդդեմ «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ աշխատանքային պայմանագիրը լուծելու հրամանն անվավեր ճանաչելու, նախկին աշխատանքում վերականգնելու, հարկադիր պարապուրդի բռնազանձելու պահանջի մասին

Թիվ ԵՂ2/1050/02/24 քաղաքացիական գործն ըստ Մելանյա Ուրմիանոսի Ջանոյանի հայցադիմումն ընդդեմ «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ վերջնահաշվարկի չվճարված գումարները բռնազանձելու պահանջի մասին:

Թիվ ԵՂ2/3314/02/24 քաղաքացիական գործն ըստ Սուսաննա Սերգեյի Չալումյանի հայցադիմումն ընդդեմ «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ անձնական ոչ նյութական իրավունքների ոտնահարման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման պահանջի մասին:

Թիվ ԵՂ2/6320/02/24 քաղաքացիական գործն ըստ Էռնեստ Կարենի Մանուկյանի հայցադիմումն ընդդեմ «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի՝ պատասխանողից բռնագանձել 36,685 հազ. դրամ, ինչպես նաև հայցադիմումը դատարան ներկայացնելու օրվանից հայցագնի (36,685 հազ. դրամ) նկատմամբ հաշվեգրել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսներ՝ օրական 12 հազ. դրամի չափով՝ մինչև պարտավորության ամբողջական կատարման օրը:

28.6 Երաշխավորություններ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի տրամադրված երաշխավորություններ:

29 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

2022թ. Փետրվարի 24-ին Ռուսաստանի Ֆեդերացիան լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի Հանրապետության դեմ: Ռուսաստանի ներխուժումը արժանացավ միջազգային շատ երկրների դատապարտմանը, որն ուղեկցվեց Ռուսաստանի դեմ պատժամիջոցների կիրառմամբ, ինչի արդյունքում էլ Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս, ռազմական գործողությունների ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի է:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության ու ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն որ ՀՀ-ն Եվրասիական տնտեսական միության անդամ է՝ ստեղծված իրավիճակը անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:

Հայաստանի Հանրապետության քաղաքական դաշտը նույնպես շարունակում է մնալ անկայուն. 2022թ. Սեպտեմբերի 13-14-ին Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ ծավալեց ՀՀ սահմանի տարբեր ուղղություններով: Լայնածավալ գործողությունները տևեցին 2 օր, սակայն իրավիճակը շարունակում է լարված մնալ և դժվար է գնահատել հետագա զարգացումները:

Ելնելով վերոնշյալ իրադարձությունների անկանխատեսելիությունից՝ Ընկերության ղեկավարությունը հնարավոր չի համարում գնահատել վերոնշյալ դեպքերի ֆինանսական հետևանքը Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

30 Գործարքներ կապակցված կողմերի հետ

30.1 Վերահսկողություն

Ընկերությունը վերահսկվում է հիմնադիր տնօրենի կողմից:

30.2 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31- դրությամբ		2024թ.	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Տրված կանխավճարներ	34,500	2,622,026	(2,636,124)	48,598
Դեբիտորական պարտքեր	68,831	4,086	(11,429)	76,174
Կրեդիտորական պարտքեր	175,250	(2,886,319)	3,032,370	29,199
Վճարված շահաբաժին	25,100	(548,729)	573,829	-

Ստացած վարձակալություն	1	-	-	1
Աշխատավարձ	-	(73,074)	73,074	-
	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31- դրությամբ		2023թ.	Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31- դրությամբ
Տրված կանխավճարներ	48,598	2,698,079	(2,681,981)	32,500
Դեբիտորական պարտքեր	76,174	11,229	(9,675)	74,620
Կրեդիտորական պարտքեր	29,199	(2,809,182)	2,729,966	108,415
Վճարված շահաբաժին	-	(1,056,291)	1,056,291	-
Ստացած վարձակալություն	1	(50,533)	33,600	16,934
Աշխատավարձ	-	(84,889)	84,889	-